Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ԵՑ1 պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «18 տարին լրացած անձանց ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 1. Երևան – 1 ցերեկային կենտրոն |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023-31.12.2023թթ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.04.2023-30.06.2023թթ. |
| **Ներկայացման օր** | 06. 07. 2023թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպում,
- սննդի տրամադրում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողների անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի, շահառուները սպասարկվել են իրենց հարմարեցված կենտրոններում, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում, ինչի արդյունքում իրականացվել է 1 դեպքի վարում՝ աջակցող պարագաների ստացման կազմակերպում /լոգանքի աթոռ, ձեռնափայտ և լսողական սարք/, 6 ուղղորդումներ, որոնք հիմնականում կապված են եղել աջակցող պարագաների ստացման և տարեկան վերափաստագրման հետ:

  Սոցիալական աշխատողի կողմից շահառուների հետ իրականացվել են խմբային աշխատանքներ «Ես և շրջակա աշխարհը», «Ինքնարտահայտում և ինքնաբացահայտում», «Սուրբ Զատիկ. տոնի ավանդութները և հոգևոր խորհուրդը», «Մենք և մեր վերաբերմունքը շրջապատին», «Արժեքային համակարգի փոփոխություն մեր գիտակցության մեջ», «կենսաթոշակների և նպաստների բարձրացում» թեմաներով:

  Հոգեբանական աշխատանքի շրջանակում իրականացվել է 23 խմբային հանդիպում ցերեկային կենտրոնի շահառուների հետ, որի ընթացքում քննարկվել են տարաբնույթ թեմաներ՝ համակցված պրակտիկ վարժություններով: Հանդիպումներն ուղղված են եղել առավելապես ինքնաճանաչմանը: Հանդիպումներին ներկա են գտնվել 15 շահառուներ:

Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:

Բուժքրոջ կողմից իրականացվել է ներարկում թվով 1 շահառուի համար, թվով 4 շահառուի համար աչքի դեղորայքի կաթեցում, թվով 21 շահառուի զարկերակային ճնշման չափում, հիգիենայի կանոնների վերահսկում, ճաշերի ստուգում և շաբաթական մեկօրյա գրաֆիկով առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացի կազմակերպում, թվով մեկ շահառուի ուղղորդում վնասվածքաբանի խորհրդատվության՝ աջակցող պարագա ստանալու նպատակով: Շահառուների հետաքրքրություններից ելնելով խմբային աշխատանք է իրականացվել նաև բուժքրոջ կողմից «Անձնական հիգիենայի կանոնները» և «Շաքարային դիաբետ» թեմաներով:

- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոններում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, հոգևոր արժեքների գնահատման, առողջական խնդիրների մեղման, հիշողության ամրապնդմանն ուղղված խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:

  Կենտրոններում գործել են շահառուների հետաքրքրություններին համապատասխանող տարբեր խմբակներ, որոնց մասնակցել է թվով 75 շահառու. այդ խմբակներն են
    - հոգևոր խմբակ,
    - ժողգործիքների խմբակ՝ «Երկու սերունդ»,
    - կինեզիոլոգիայի խմբակ,
    - առողջ ապրելակերպի խմբակ,
    - «Հոգեբանի անկյուն»/ խմբակ,
    - արտ թերապևտիկ աշխատանքների խմբակ,
    - գրական ակումբ,
    - նկարչական խմբակ,
    - «Հմուտ ձեռքեր»-ի խմբակ,
    - Աշուղական խմբակ.
    - կարի խմբակ:

Կազմակերպվել են մշակութային 53 միջոցառումներ՝ կենտրոնում և կենտրոնից դուրս: Դրանք են՝

- Ապրիլ ամսին ծնված շահառուների ծննդյան տարեդարձերի նշում,
- Սուրբ Զատկի նշում,
- Ապրիլի 7-ի մայրության եւ գեղեցկության տոնի նշում,
- Ցեղասպանության հիշատակի օրվան նվիրված քննարկում,
- Ծաղկազարդի օրվա խորհրդի մասին քննարկում,
- Այցելություն Ազգային պատկերասրահ,
- Այցելություն Կինո Մոսկվա «Տաղ հոգու ճանապարհ» ֆիլմի դիտում,
- Այցելություն «Նեմեսիս» հուշակոթող աղբյուր,

- Այցելություն Երկաթուղու թանգարան,
- Համբարձման տոնի նշում,
- Գրական գեղարվեստական միջոցառում Քանաքեռ- Զեյթունի ժողովրդական գործիքների համույթի մասնակցությամբ,
- Այցելություն Բուսաբանական այգի,
- Մայիս ամսին ծնված շահառուի ծննդյան տարեդարձի նշում,
- Մայիսյան եռատոների նշում,
- Գրական գեղարվեստական ցերեկույթ նվիրված Շառլ Ազնավուրի ծննդյան տարեդարձին,
- Առողջապահության նախարարության հետ համատեղ «Առողջ և ակտիվ ծերացում» թեմայով բացօթյա միջոցառման կազմակերպում,
- Ֆոկուս խումբ՝ առողջապահական ծառայությունների ոլորտում տարեցների շահերի պաշտպանության նպատակով,
- Միջոցառում Հայ-չինական բարեկամության դպրոցում ժողգործիքների խմբի մասնակցությամբ, ինչպես նաեւ հոգեբանի կողմից իրականացված ակտիվ քննարկում բուլինգի մասին տարեցների եւ դպրոցի սաների մասնակցությամբ,
- Այցելություն Ծիծեռնակաբերդ եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
- Այցելություն Ավետիք Իսահակյանի տուն թանգարան,
- Ներգնա տուր դեպի Ստեփանավան, Դենդրոպարկ, Սուրբ Հովհաննես եւ Սուրբ Խաչ,
- Հանդիպում չինացի բարեգործ ընկերների հետ:

Շահառուներն այցելել են համերգասրահներ և մասնակցություն ունեցել.

- Առնո Բաբաջանյան համերգասրահում գուսանական եւ ժողովրդական երգի համույթի համերգին,
- Առնո Բաբաջանյան համերգասրահում «Նարեկ» հիմնադրամի երգչախմբի համերգին,
- Արամ Խաչատրյան համերգասրահում ֆրանկոֆոնիայի շրջանակներում Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախմբի համերգին,
- Արամ Խաչատրյան համերգասրահում՝ Վիվալդի եւ Պիացոլա «8 եղանակ» Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգին,
- Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Բարեկամություն համույթի Շամիրամի տեսիլքը խորեոգրաֆիկ ներկայացմանը,
- Կամերային երաժշտության տանը դաշնակահար Հայկ Մելիքյանի մենահամերգին,
- Կամերային երաժշտության տանը Ֆրանկոֆոնիայի շրջանակներում ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործությունների համերգին,
- Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում «Հրավիրված եք ծնունդի» ներկայացմանը,

- Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնում «Սիրային իրարանցում» ներկայացմանը,
- Կամերային երաժշտության տանը «Տաղարան» համույթ եւ «Տեսիլք» ավանգարդ ֆոլկ-ջազ համերգին,
- Կամերային երաժշտության տանը Կոմիտասի անվան լար քառյակ, համերգ նվիրված Ավետ Գաբրիելյանի հիշատակին,
- Առնո Բաբաջանյան համերգասրահում Մարկո Շեվարլիզ ակորդեոն եւ Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի համերգին,
- Արամ Խաչատրյան Հայաստանի պետական սինֆոնիկ նվագախումբ դիրիժոր Ս. Սմբատյան, Վերոնիկա Ջիոեվայի համերգին,
- Առնո Բաբաջաբյան Հայաստանի պետական համերգասրահում Յակովոս Կոլանյանի կիթառի համերգին,
- Կամերային երաժշտության տանը Կոմիտասի անվան լար քառյակ, համերգ նվիրված Էդվարդ Միրզոյանի ծննդյան հիշատակին,
- Կամերային երաժշտության տանը «Տաղարան» համույթի մենակատար Քրիստինե Չթչյան ջութակի, Սեդրակ Երկանյան դաշնամուրի համերգին,
- Կամերային երաժշտության տանը Տ. Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային մրցույթի գալա համերգին,
- Առնո Բաբաջանյան համերգասրահում Իսպանական եւ ջազային կիթառի “Armenian Fuison Band” ջազայի համերգին,
- Առնո Բաբաջանյան համերգասրահում Հայ գուսանական եւ ժողովրդական երգի պետական անսամբլ՝ մենակատար Լաուրա Մամյանի համերգին,
- Արամ խաչատրյանի անվան 19-րդ միջազգային մրցույթ բացման համերգին,
- Կամերային երաժշտության տանը «Տաղարան» երաժշտական մրցույթ մենակատար Աննա Մայիլյան
- Առնո Բաբաջանյան համերգասրահ Շեփոր, թավջութակ, հարվածային գործիքներ, ստեղնաշարային գործիքներ
- Կամերային երաժշտության տուն Հայաստանի պետական նվագախումբ
- Արամ Խաչատրյան անվան 19-րդ միջազգային մրցույթի փակման գալա-համերգը և հաղթողի մրցույթը
- Կամերային երչաժշտության տուն դաշնակահար Հայկ Մելիքյանի մենահամերգը Խաչատրյանական գլուխգործոցներ, աշուղական երաժշտություն
- Կամերային երաժշտության տանը «Տաղարան» համույթի համերգին՝ մենակատար Գայանե Ղամբարյան,
- Կամերային երաժշտության տանը Ջազ երեկոյին. իտալական երաժիշտներ Ստիլիո Ստեպե՝ սաքսոֆոն, Էդուարդո՝ էլեկտրոնային կիթառ,
- Հակոբ Պարոնյանի անվան թատրոնում Վանաձորի «Հորովել» երգի պարի անսամբլի համերգին,
- Արամ Խաչատրյան համերգասրահում Մենտելսոն Խաղաղ Ծով և երգ նավարկության, Բրուխ ջութակ կոնցերտին,

- ➢ Կամերային երաժշտության տանը Չայկովսկու օպերետներին,
- ➢ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի «Մոլորակները» ջութակի կոնցերտին:

Ցերեկային կենտրոնի 14 շահառուներ մասնակցել են ՀՀ Եվրասիա միջազգային համալսարանի կողմից կազմակերպված «Թվային գրագիտություն» ծրագրին:

- Սննդի տրամադրման շրջանակներում՝ կենտրոններում յուրաքանչյուր օր սննդային ընդմիջում է կազմակերպվել, ինչպես նաև սուրճի և քաղցրավենիքի հյուրասիրություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնների ֆեյսբուքյան էջերում տեղադրվել են կենտրոնների առօրյան ներկայացնող նյութեր, որոնցից ստորև ներկայացվում են մի քանիսը.

- Ավանի ցերեկային կենտրոնում կազմակերպված միջոցառումը (տե՛ս հետեւյալ հղմամբhttps://www.facebook.com/100034275520193/posts/pfbid035jvLc4EH8gvL9VXzBxaYSei9kKJ5F1Qi1wL7Uwp98oVdYWiAPoS79B5W66HqBcH5l/?app=fbl),
- Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի նախապատրաստում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrwut ),
- Երգի խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrwvs),
- Ապրիլի 7-ը իր գեղեցիկ գույնով զարդարեց Գոհարը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrwwv),
- Սուրբ Հարության տոնին նվիրված գեղեցիկ միջոցառում_(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrwxk),
- Բարեկամություն անսամբլի համերգ-ներկայացումը՝ Շամիրամի տեսիլքը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbls),
- Ֆոկուս խումբ «Առողջ ծերացում» թեմայով__(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbjw),
- Այցելություն Հայաստանի ազգային պատկերասրահ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbjb),
- Երբ խնամքն ու հոգատարությունը տալիս են իրենց պտուղները__(տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbik),
- Գրական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbhv),
- Հոգևոր զրույցներ Գեղամ Սարկավագի հետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbav),
- Ակտիվ եւ առողջ ապրելակերպ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/hrbah),
- Ալեքսանդր Շիրվանզադե «Քաոս» ֆիլմի դիտում, քննարկում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/hrbeg),

- այց «Նեմեսիս» գործողության հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթող (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/hrbfw),
- Այց Երկաթուղու թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/hrbgt),
- Վիտամինների կարեւորությունը տարեց հասակում (http://surl.li/ipwpv),
- Այցելություն Երևանի Բուսաբանական այգի (http://surl.li/ipwya),
- Զատկի տոնին նվիրված միջոցառումը, (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100034275520193/videos/477811741152652/?app=fbl),
- ֆոկուս խմբի անցկացումը, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid02VG4igoXJq8MtpT6rqKkRUx25ZHUWwRcYXenPdc12sEUJWbHi2uDuun7biBMucF6Cl/?app=fbl),
- Հայ-Չինական բարեկամության դպրոցում կազմակերպված միջոցառումը, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid02XBTb9XMRmRfKnBG6sDfMXJGUdAY15oHZjTqtt6t4BwBBfZ5rPDV26eF1S4Ag2KbPl/?app=fbl),
- Քննարկում Հայ-Չինակա բարեկամության դպրոցում, (տե՛ս հետեւյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid0ZCeEND5mLZ8vY2dVqgKWRxz2QA5UA2wCH7VoriHZ6abza9rLptM1pLq5RaiHtEiJl/?app=fbl),
- Այցելություն Ծիծեռնակաբերդ եւ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid0B8vEfM6ghriaWA3wyK4pyEDBnpyS5XkvHFuQWk6f4XHBEJB5ypfiygiLnnY15Nosl/?app=fbl),
- Այցելություն Ավետիք Իսահակյանի տուն թանգարան, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid0wcasFKoURk536dHP426EejK5usCA1nMUVBzLD2aeNH2ddRRcyi8RosPrt8fPeT9Sl/?app=fbl),
- Ներգնա տուր դեպի Լոռու մարզ, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid02NbUmGUGTWC25fUwakqBHFdrytH5CaAn7adFxbRooNDDFjJabzePEibwzNgb6pVKol/?app=fbl),
- Հանդիպում չինացի բարեգործ ընկերների հետ, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid02KjbADrTu9a1dK56ZE4PzegL5ow6TvJqraoaFkfDdw7Hh41wFmYqFB3uXt8a85K7wl/?app=fbl).
- «Առողջ և ակտիվ ծերացում» թեմայով արշավի կազմակերպում Առողջապահության նախարարության կողմից, (տե՛ս հետեւյալ հղմամբ https://www.facebook.com/100034275520193/posts/pfbid02cYWunY8uf1MR87GaevEwDWDdMGPvBKWP7XTmzzuSwsBXy67hQFBLQywxWSRNYsLTl/?app=fbl, https://www.facebook.com/photo?fbid=299959489273689&set=pcb.299959592607012, http://surl.li/ipwkh),
- Հատված գրական գեղարվեստական միջոցառումից, Քանաքեռ- Զեյթունի ժողովրդական գործիքների համույթի մասնակցությամբ (տե՛ս հետևյալ հղմամբ՝

https://www.facebook.com/100077789192799/videos/pcb.251129967489975/3558058744470117),

- Հատված նորաստեղծ երգի խմբակի առօրյայից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100077789192799/videos/1177267567004297),
- Հատված «Շաքարային դիաբետ» թեմայով իրազեկում բուժքրոջ կողմից (տե՛ս հետևյալ հղմամբ՝
- https://www.facebook.com/100077789192799/videos/1088021522156257),
- Հատված մենք շարունակում ենք երգել և մեզ մոտ քիչ քիչ ստացվում է (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/100077789192799/videos/277614534750151),
- Մասնակցություն Հ. Պարոնյանի թատրոնում Վանաձորի «Հորովել» երգի, պարի համույթի համերգին, (տե՛ս հետևյալ հղմամբ՝https://www.facebook.com/photo/?fbid=301734795762825&set=a.194349436501362):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, մշակութային միջոցառումների կազմակերպում
- սննդի տրամադրում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում.

- խմբավար/հոգեբանը անձնական նախաձեռնությամբ անցել է անհատական սուպերվիզիա, մասնակցել է հուզական այրումը կանխարգելող բալինտյան խմբերին, մասնակցել է «Բռնության ենթարկված անձանց հետ

հոգեբանական աջակցության կազմակերպման առանձնահատկությունները» թեմայով թրեյնինգային ծրագրին (ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոն 18 ժամ):

- հոգեբանը մասնակցել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Հատուկ խնամքի հաստատություններում խնամվողների խնամքի առանձնահատկությունները» թեմայով եռօրյա դասընթացին (24 ժամ):
- բուժքույրը եւ սոցիալական աշխատողը մասնակցել են Աշխատանքի եւ Սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստման եռօրյա դասընթացին:
- սուպերվիզորը մասնակցել է «Տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի ծառայություններ եւ պետական ֆինանսավորում» թեմայով համաժողովին, որի ընթացքում քննարկվել են կառավարության կողմից իրականացվող դրամաշնորհային ծրագրերը, ֆինանսավորումը և 1744-Ն որոշմամբ ընդունված, չափորոշիչներով աշխատելու դժվարությունները:

| ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ | ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>Նախարարության գլխավոր քարտուղար՝<br><br>______________________________ Ս.Մուրադյան<br>(ստորագրություն) Կ. Տ. | «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ<br><br>Նախագահ՝<br><br>______________________________ Ե.Մխիթարյան<br>(ստորագրություն) Կ. Տ. |

Հավելված 7
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ԵՅ1 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| | | ստացած անձանց թիվը |
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 68 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 11 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 7 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 64 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 75 |
| 3. | Այլ ծառայություն (*նշել*) | - |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մխիթարյան _______________________

«__10__» __07__2023 թ.